ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Արտակ Զեյնալյանի, ՀՀ արդրարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանի և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար Լիլյա Աֆրիկյանի՝ Կորեայի Հանրապետություն (Սեուլ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձիք՝ Արտակ Զեյնալյան, Սուրեն Քրմոյան, Լիլյա Աֆրիկյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ և վարչապետի աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Կորեայի Հանրապետություն (Սեուլ), 2018թ. նոյեմբերի 3-7-ը:

Հրավիրող կողմը՝ Բաց կառավարման գործընկերության քարտուղարություն, Կորեայի Հանրապետության կառավարություն:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Բաց կառավարման գործընկերության Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային հանդիպմանը:

Քննարկված թեմաները՝ Հանդիպման ընթացքում քննարկվել են բաց կառավարման համակարգի առջև առկա համաշխարհային մարտահրավերներին առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Արտակ Զեյնալյանի գլխավորած պատվիրակությունը Բաց կառավարման գործընկերության գործադիր տնօրեն Սանջայ Պրադհանի հրավերով 2018թ. նոյեմբերի 3-7-ը Կորեայի Հանրապետությունում (Սեուլ) մասնակցել է Բաց կառավարման գործընկերության Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային հանդիպմանը:

ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Արտակ Զեյնալյանի գլխավորած պատվիրակություն կազմում են եղել ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը և ՀՀ վարչապետի աշխատակազմի

արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Լիլյա Աֆրիկյանը:

Հարկ է նշել, որ Բաց կառավարման գործընկերությանն անդամակցում են 70 երկրներ, հարյուրավոր քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, որոնք ամբողջ աշխարհում խթանում են ժողովրդավարական փոփոխություններին քաղաքացիների մասնակցությունը:

Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային հանդիպմանը մասնակցել են ավելի քան երեք հազար ներկայացուցիչ 70 երկրներից՝ պետությունների և կառավարությունների ղեկավարներ, խորհրդարանների անդամներ, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

Հանդիպման մասնակիցները հանդես են եկել ելույթներով՝ ներկայացնելով բաց կառավարման գործընկերության շրջանակներում իրենց երկրներում իրականացված աշխատանքները:

ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային հանդիպմանը հանդես գալով ելույթով՝ հանդիպման մասնակիցներին ներկայացրել է ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ իրականացվող աշխատանքները, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական հասարակության դերի բարձրացման ուղղությամբ նախատեսվող քայլերը:

Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատարը անդրադարձել է 2018 թվականի գարնանը Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններին, այն որակել է աննախադեպ և պատմական ու նշել, որ այդ օրերին հայ ժողովուրդը թավշյա, խաղաղ, առանց բռնության հեղափոխության միջոցով իրացրեց իշխանության իր ուղղակի իրավունքը:

Նախարարի պաշտոնակատարի խոսքով՝ որպես կարևորագույն քայլ անհրաժեշտ է երկրում հաղթանակած հեղափոխությունը վերածել ինստիտուցիոնալ բարեփոխումների, ինչը առաջիկա ընտրություններից հետո նոր թափ պետք է առնի. պետական համակարգի բոլոր օղակները ևս պետք է հեղափոխվեն և վերափոխվեն:

Միաժամանակ Արտակ Զեյնալյանը կարևորել է երկրում տեղի ունեցող բարեփոխումներում քաղաքացիական հասարակության, բիզնեսի անմիջական մասնակցությունը և սատարումը:

Նախարարի պաշտոնակատարն առանձնացրել է նաև ևս մեկ կարևոր գործոն, որը նպաստում է Հայաստանում տեղի ունեցած հեղափոխական էներգիայի նյութականացմանը և դրա կյանքի կոչելուն. դա հանրության առջև հաշվետվողականության, թափանցիկության, բաց գործելու Կառավարության որդեգրած քաղաքականությունն է: Արտակ Զեյնալյանը նշել է, որ հեղափոխության օրերին, ինչպես նաև համաձայնության կառավարության ձևավորումից հետո սոցիալական ցանցերը մեծ դեր և նշանակություն են ունեցել հեղափոխական ուժերի և ապա նաև Կառավարության կողմից հասարակության առջև հաշվետվողականության և թափանցիկության ապահովման տեսանկյունից, ինչն էականորեն նպաստել է Հայաստանում ժողովրդաիշխանության ամրապնդմանը և ժողովրդավարության զարգացմանը, ինչպես նաև այդ փողոցային պայքարի դրական էներգիան կառավարման համակարգին հասցնելուն և իրականացվող բարեփոխումներին ժողովրդի անմիջական մասնակցությունն ապահովելուն:

ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Արտակ Զեյնալյանը ամփոփելով ելույթը՝ շեշտել է, որ Կառավարությունը փորձում է նորարարական էլեկտրոնային ժողովրդավարության գործիքների շարունակական ներդրմամբ պայքարի դրական էներգիան վերածել կառավարման գործընթացին հասարակության անմիջական մասնակցայնությանը:

Անհրաժեշտ է նաև նշել, որ Սեուլ կատարած շրջանակում ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Արտակ Զեյնալյանը հանդիպումներ է ունեցել Հարավային Կորեայի Հանրապետության Խորհրդարանի խոսնակ Մուն Հի-Սանգի, Նախագահի աշխատակազմի ներկայացուցիչ Լի Յոնգսանի, Բաց կառավարման գործընկերության գլխավոր գործադիր տնօրեն Սանջեյ Փրադհանի, Հարավային Կորեայի Ներքին գործերի և անվտանգության նախարար Կիմ Բու Քյումի, Մոնղոլիայի Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Գոմբոժավին Զանդանշաթարի, Ղրղզստանի արդարադատության նախարար Մարատ Ջամանկուլովի, ինչպես նաև Վրաստանի

ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը մասնակցելով Բաց կառավարման գործընկերության Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային հանդիպմանը՝ հանդես է եկել ելույթով՝ նշելով, որ Հայաստանի ներկայիս Կառավարությունն ունի շատ բարձր վարկանիշ. քաղաքացիներն իրենց անվերապահ աջակցություն են հայտնում Կառավարության կողմից իրականացվող բարեփոխումներին: Նա ընդգծել է, որ ԲԿԳ-ն այն գործիքն է, որի միջոցով հնարավոր է դառնում քաղաքացիական հասարակությանը ներգրավել պետական կառավարման բարեփոխումների գործընթացում: Ս. Քրմոյանի խոսքով՝ քաղաքացիների կողմից Կառավարությանը տրված վստահության քվեն շոշափելի արդյունքի վերածելու և դրա հիման վրա անհրաժեշտ բարեփոխումներ իրականացնելու համար պետք է համապատասխան գործիքակազմ: Այդ գործիքակազմը կարող են լինել քաղհասարակության ավելի լայն ներառումը բարեփոխումներում, ինչպես նաև ավելի մասնակցային, թափանցիկ և հաշվետվողական կառավարման համակարգի ձևավորումը: Եզրափակելով իր ելույթ՝ Ս. Քրմոյանը ընդգծել է, որ դա հնարավորություն կտա ապահովել սեփականության զգացումը իրականացված բարեփոխումների նկատմամբ: Արդյունքում այդ բարեփոխումների համակատարողները կլինեն թե՛ հասարակությունը՝ ի դեմս հասարակական կազմակերպությունների, թե՛ Կառավարությունը:

Գործուղման ընթացքում տարբեր գործընկերների հետ քննարկվել է նաև այն իրողությունը, որ Բաց կառավարման գործընկերության առումով Հայաստանը իրականացրել է մեծածավալ աշխատանք և դարձել այս առումով տարածաշրջանում առաջատարը՝ հաշվի առնելով թե կատարված աշխատանքների ծավալը, թե այն, որ հարևան Ադրբեջանն ու Թուրքիան տարբեր պատճառներով դուրս են թողնվել այս գործընթացից, իսկ Վրաստանը վերջին շրջանում այս առումով հետընթաց է գրանցել: Թե հայկական պատվիրակության շրջանակներում, թե գործընկերների հետ քննարկումներում կարևորվել է Բաց կառավարման գործընկերության

շրջանակներում Հայաստանի ակտիվ և հետևաղական ջանքերի ապահովումը՝ տարածաշրջանում առաջատարի դիրքերը ամրապնդելու և պահպանելու համար:

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ

09.11.2018թ.